

Համար
Կրկնորդ փորձի

ԱՆԻ ՔՈՋԱՐ

Կյանքը
երկրորդ փորձից

Ինչպես սիրել նորից
և կրկին մայրանալ



ԵՐԵՎԱՆ
2024

ՀՏԴ 159.9
ԳՄԴ 88.3
Ք 821

Քոչար Անի
Ք 821 Կյանքը երկրորդ փորձից: Ինչպես սիրել նորից և կրկին մայրանալ / Ա.Քոչար.- Եր.: Newmag, 2024.- 148 էջ:

Անիի երկրորդ գիրքը նրա երկրորդ կյանքի, երկրորդ ամուսնության, երկրորդ երեխայի ու կյանքի ընձեռած երկրորդ հնարավորության մասին է: Մոտիվացիոն այս գիրքը իրական պատմության օրինակով ցույց է տալիս, թե ինչպես է հնարավոր հաղթել մահվանը, կոտրել կարծրատիպեր, հրաժարվել անձնական թուլություններից, վախերից ու տագնապներից, թե ինչպես կարելի է սեփական ճակատագրին ևս մեկ հնարավորություն տալ, կրկին հավատալ սիրուն, հաջողությանը, հրաշքերին: Այս պատմությունը չափազանցված չէ, դեպքերն ու դեմքերը փոխված չեն: Հեղինակը փոխանցում է իր անձնական փորձառությունը, որը կարող է հուզել, ոգեշնչել և լավ օրինակ ծառայել:

Այս գիրքն այն մասին է, որ հնարավոր է հաջողության հասնել նաև երկրորդ փորձից, նույնիսկ եթե դա անհնարին է թվում: Այս գիրքը մարդկանց կօգնի վերագտնել իրենց հավատը, հույսը, պայքարելու ոգին և կրկին սիրելու համարձակությունը:

ՀՏԴ 159.9
ԳՄԴ 88.3

Գրքի գլխավոր գործընկեր՝
ՀԱՅ-ԱՄԵՐԻԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
aawc.am



ISBN 978-9939-967-21-9

Անի Քոչար «Կյանքը երկրորդ փորձից» © 2024, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հրատարակության բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել հեղինակի հետ կնքած պայմանագրով:

Բովանդակություն

1 Դառը օշինդր	7
2 Քրքում	21
3 Փիփերթ	31
4 Ձիաձեստ	47
5 Մեղվամուշկ	61
6 Գայլուկ	75
7 Սամիթ	85
8 Եղինջ	95
9 Սրոհունդ	103
Վերջաբան	115
Հրաժեշտից առաջ	131
Երախտագիտության խոսք	133
Նշումների հատված	135



1
—
ԴԱՄԱՆՆԻ ՕՉԻՆՊԻՐ

Շատ լեղի համ ունեցող բույս (արսինթ), օգտագործվում է բժշկության մեջ և ըմպելիքներ պատրաստելիս: Միջնադարում գիրք գրելիս խորհուրդ էր փրվում ըմպել օշինդրի գինի կերակուր ուտելուց առաջ, ընթացքում և հետո, իսկ թե օշինդրի գինի չգտնվեր, խորհուրդ էր փրվում վերցնել օշինդր ու ջրով եփել: Այդ ջրից արբենալը երաշխավորվում էր: «Թե մեղրով խառնես և տաս հիվանդին, գլուխը կթեթևացնի, չի թողնի, որ մարդ շուտ հարբի, թե գրին ջուր խառնես և գրես, թանաքն ամուր կլինի և թղթից դուրս չի ելնի, թե սնդուկի մեջ դնես, սնդուկի իրերն էլ ցեցը չի ուտի, թե ծխես տան մեջ, սողունները կփախչեն, թե նշի ձեթի մեջ եփես, մի քիչ այծի լեղի կաթեցնես ու խառնես, ապա ականջի մեջ կաթեցնես, ամենայն ցավ կտանի»:

Ս վտոմեքենայում լռություն էր: Նա իր սովորության համաձայն արագ էր վարում, ես չէի խոսում, թեև իմ սովորության համաձայն՝ պետք է հանդիմանեի, բարկանայի ու հորդորեի, որ դանդաղ ու զգույշ վարի: Մտքերս ուրիշ տեղ էին. մի՞թե այլևս չեմ մայրանալու, մի՞թե նրան զավակ չեմ պարգևելու, մի՞թե քիմիաներն անդառնալիորեն խլել են ինձնից մայրանալու պարգևը: Արցունքները խեղդում էին կոկորդս, փորձում էի զսպել ինձ. նա տանել չի կարողանում, երբ լալիս եմ, տխուր եմ կամ հուսահատ:

Չզգացի՝ ինչպես հասանք: Վերարտադրողականության կենտրոնից դուրս ականջներումս շարունակ բժշկի կոպտաձայնն էր, նրա չապրումակցող բառերը. «Բա ի՞նչ էիք ուզում, էդ քիմիաները, էդ բուժումները, որ Դուք եք ստացել, գումարած տարիքը՝ իրենցն անում են: Չկարծե՛ք, թե ժամանակի ընթացքում ավելի լավ է լինելու... ժամանակը Ձեր օգտին չի աշխատում, տարիքի հետ պատկերն ավելի ու ավելի է վատանալու: Էդքան շատ եք սիրում Ձեր ամուսնուն, թող ուրիշ կնոջից՝ դո՛նորից, ունենա բալիկ, Դուք էլ կարող եք պտղի կրողը լինել՝ որպես սուրոգատ մայր. ճիշտ է, դա Ձեր երեխան չի լինի, այլ միայն ամուսնու, բայց կպահեք Դուք, և մայրն էլ Դուք կլինեք...»: Բարբաջանքներ թվացող մեկնաբանությունների շարանն ամենայն ազնվությամբ փոխանցեցի ամուսնուս: Խիստ զայրացած՝ կանխեց պատմելս, վերջնավճռի նման ասաց՝ թեման փակված է, մեզ երեխա պետք չէ, կրստացվի՝ կստացվի, ոչ՝ ոչ, որ ես ամենակարևորն ու թանկն եմ, ու մեզ բավական է նաև որդիս՝ Դավիթը:

Նման խոսակցություն ունեցել էինք նաև ամիսներ առաջ, երբ նորից այդ նույն վերարտադրողականության կենտրո-

նում էինք: Երկու տարի անց՝ չիղիանալուց, զանազան բժիշկների մոտ լինելուց հետո, դժվարությամբ էի համոզել ինձ գնալ հետ՝ կենտրոն: Այդ ժամանակ էլ հուսադրող որևէ բան չասացին: Եթե լսած լինեի բժշկուհուն, ընդմիջտ հրաժարված կլինեի մայրանալու մտքից: Ի պատասխան ԷԿՌ-ի մասին իմ հարցադրումներին՝ ասացին, թե արտամարմնային բեղմնավորման ժամանակ հնարավոր է՝ հորմոնալ և այլ բուժումների ու միջամտությունների արդյունքում օրգանիզմն չդիմանա, և գլուխ բարձրացնի օնկոլոգիական խնդիրը: Ամուսինս կըտրականապես արգելեց այդ ուղղությամբ մտածել կամ որևէ նոր քայլ ձեռնարկել: «Ո՛չ մի արհեստական միջամտություն, որ կարող է վտանգել առողջությունդ ու կյանքդ», - սա էր նրա վերջնական ասելիքը:

Ամիսներ շարունակ ելքեր էի փնտրում: Հանձնվել չէի կարող, ես մտադիր չէի նահանջել. մենք պետք է մեր երեխան ունենայինք:

Եվ ահա, ամիսներ անց ամուսնուս դժվարությամբ համոզեցի գնալ հերթական այցին, որպեսզի դիմենք պետական նոր մի ծրագրի, ըստ որի՝ աջակցում են ընտանիքներին համալրվել: Ու ինչ մեծ հիասթափություն էր հասկանալը, որ պետական ծրագիր կոչվածները հիմնականում փուչիկ են:

Ջարդուփշուր երազանքներից ծանրացած՝ եկանք տուն, ու փլվեցի վերջնականապես, երբ ամուսինս գնաց աշխատանքի: Այնպես էի լալիս, կարծես երեխա էի կորցրել: Հուսահատված էի, զայրացած, ներսս որոտում էր անպրոպի պես, ու արցունքի հեղեղները խորտակում էին աչքերս: Հանկարծ ասես մեկն ասաց՝ հղիության թեստ արա՛: Տանը միջտ տասնյակներով ունեի. գրեթե ամեն ամիս փորձում էի՝ հույսով, թե հրաշք

Կլինի: Պահի զգացողությունն այլ էր. կարծես նա, ում հետ միշտ անտես կապի մեջ եմ, ուղղորդեր թեստն անել, չնայած ոչինչ չէր հուշում, որ դրա անհրաժեշտությունը կա: Չէի կարող չլսել: Անմիջապես գործի անցա: Թեստն անում էի՝ առանց սպասումների, առանց մեծ ակնկալիքի: Եվ ակնթարթներ էին հարկավոր այդ զգացողությունների կտրուկ փոփոխության համար: Թեստի երկար սպասված երկու գիծը քիչ մնաց՝ կաթվածի հասցներ. աչքերիս չէի հավատում: Զգացմունքների տարափից գլուխս մթազնեց: Չէի հասկանում, թե որն է իրականի ու անիրականի սահմանը: Սահմանային հոգեվիճակում մենք կարող ենք հաճախ ցանկալին իրականի տեղ ընդունել և տեսնել բաներ, որ գոյություն չունեն: Գրո՞ղը տանի, մի՞թե իսկապես հայտնվեց երկրորդ գիծը, թե՞ աչքիս է երևում, իսկ եթե թեստն անպիտան է... Պետք է կրկնել: Անպայման պետք է կրկնել: Ու ամենազավեշտալին՝ տանն այդ պահին լրացուցիչ թեստ չկար: Հագնվում եմ արագ, վազում մոտակա դեղատուն: Աստված իմ, Աստված իմ, Աստված իմ: Փորձում եմ նորից: Երկու գիծ է: Օդի մեջ եմ: Շփոթված եմ, անակնկալի եկած: Անսպասելի էր: Անսպասելի էր: Չեմ հավատում: Արցունքներս հոսում են: Նստել եմ ու չեմ շարժվում: Չգիտեմ՝ ինչ անել, ում ասել, ում հետ բաժնեկցեմ ուրախությունը: Լուռ լաց եմ լինում:

Ես մեկ անգամ չէ, որ տեսել եմ Աստծո հրաշքն իմ կյանքում և մշտապես զգացել եմ Նրա ներկայությունն ու դերակատարումը: Ամեն անգամ, երբ որևէ բան անհնարին է թվացել, և ամեն բան բացառապես դրա չիրագործվելու մասին եղել, ես հույսս դրել եմ Տիրոջ վրա և ապավինել Նրան:

Սակայն Տիրոջը հուսալ չի նշանակում ձեռքերը ծալած նստել թախտին ու սպասել բախտին: Ոչինչ այս կյանքում սկուտեղի վրա չի մատուցվում, ոչինչ հենց այնպես չի տրվում: Հավատն առանց գործերի մեռած է և անկենսունակ: Հավատը գործով է սնվում և կյանքի կոչվում:

Հաճախ, երբ հետ եմ նայում իմ անցած ուղուն, ինձ բաժին ընկած փորձությունների փաթեթին, դրանց ծավալներին ու անհաղթահարելիությանը, հասկանում եմ, որ առանց Տիրոջ միջամտության՝ գործը գլուխ չէի բերի, բայց և ահռելի աշխատանք եմ կատարել, մեծ ջանքեր գործադրել:

Հաճախ շատ սպասելի իրադարձություններ ուշանում են մեր կյանքում, ավելի ճիշտ, մեզ է այդպես թվում, որ դրանք համառորեն հապաղում են, բայց իրականանալուց հետո, երբ հետ ես նայում ու վերլուծում, հասկանում ես, որ բնավ չեն ուշացել, եղել են ճիշտ ժամանակին, երբ կյանքը մեզ բերել, հասցրել է այդ փուլին, պատրաստել դրան: Իմ դեպքում էլ, թեև մայրանալու ցանկությունս անչափ մեծ էր, բայց սպասված իրադարձությունը եղավ այն ժամանակ, երբ հարկ էր, ու մարմինս պատրաստ էր կրել այդ հաճելի բեռը: Արդեն քիմիաթերապիաներից բավարար ժամանակ էր անցել, և ես լիովին վերականգնվել էի ու պատրաստ էի նոր կյանք տալ:

Քաղցկեղ հաղթահարած մարդկանց հաճախ են տարբեր սահմանափակումների առաջ կանգնեցնում, անթիվ-անհամար արգելքներ սահմանում: Այնինչ, դու կյանքում կարող ես ամեն բան, եթե ջանում ես և եթե հոգևոր դաշտդ ամուր ու կայուն է, ու ոչ մի պատնեշ՝ մահկանացուներից հորինված, քեզ չի կարող կաշկանդել: Ես իմ կյանքով բազմիցս ապացուցել եմ, որ չստացվել չկա, չլինել չկա, կա մեծ հավատ ու կամք, մեծ եռանդ՝

ինքդ քեզ վրա աշխատելու և կյանքդ ապրելու քո երազանքներին համապատասխան: Սահմանները մարդիկ են գծում՝ իրենց սահմանափակ մտածողությամբ ու կաղապարված գաղափարներով: Քո սահմանն այնտեղ է, որտեղ ինքդ կորոշես վերջ դնել, քո հնարավորություններն այնքան են, որքան ինքդ կորոշես:

Ամեն բան կյանքումդ ունեցած պատկերացումներից ու քո սահմանած նշաձողից է կախված: Ամեն ոք ինքն է ընտրում իր նշաձողն ու դրան հասնելու ուղիները, որը կողքինի համար կարող է բացարձակ անիրական ու անհավանական թվալ, բայց դա կողքինի խնդիրն է: Մեր խնդիրը պետք է լինի բացառապես մեր կյանքը, մեր սեփական ձեռագրով ապրելը: Մեկի նշաձողը հազիվ իր քաղաքի կամ գյուղի սահմանով է եզրափակվում, մյուսինը՝ աշխարհի ծայրով, իսկ մեկ ուրիշինն էլ՝ նորանոր եզրեր բացահայտելով, եղածով չբավարարվելով, հավատալով, որ այս տիեզերքում դեռևս շատ անհայտ՝ բացահայտման ենթակա սահմաններ կան: Զգացե՛ք նոր եզերքներ բացահայտողի մտահորիզոնի և նախատրամադրվածության արմատական տարբերությունները և կհամոզվեք, որ ամեն բան սուկ ձեր գլխում է, ձեր մտքերում ու որոշումներում:

Երբ շատ ես համառում, հանգամանքները սկսում են տեղի տալ, հարմարվել քեզ, կարծես հենց կյանքն է կոտորչները մի կողմ թողնում և քեզ երազանքների իրագործելու հնարավորություն տալիս: Տերը որևէ մեկիս համար սահմաններ չի գծել, այդ սահմանները որոշել են մարդիկ: Մեր հնարավորություններն այնքան շատ են, երբեմն նույնիսկ մեզ անհայտ, չբացահայտված ու չուրացված: Մենք ինքներս պետք է հասնենք այն կետին, որտեղ չկան կաղապարներ, որտեղ բաց-

վում է մի նոր շնչառություն, որում ի հայտ են գալիս մեզ ի վերուստ տրված հնարավորություններն ու ռեսուրսները՝ իրենց ամբողջ գունափնջով:

Գիտնականները պնդում են, որ մարդն իր ուղեղի հնարավորությունների ամբողջ ծավալը չի օգտագործում: Նույնն է նաև ուժի, էներգետիկայի, աշխատասիրության, համառության և բոլոր այլ ռեսուրսների դեպքում:

Գործի դնելով իմ ռեսուրսների ամբողջ ներկապնակը և գրանցելով հաջողություններ, որոնք անհավանական էին թվում՝ ես դեռ շարունակում եմ կասկածի տակ առնել, թե գուցե հնարավոր է և ավելին, գուցե կան պահուստային այլ ռեսուրսներ, որ իբրև գտածո ես դեռ պետք է լույս աշխարհ բերեմ ու սահմանեմ մարդկային նոր ռեկորդներ:

Այսօր, առավել քան երբևէ, ես կարող եմ վստահորեն ասել, որ կա կյանք քաղցկեղից հետո, ավելին՝ կա կյանք անկումից հետո, այն աշխարհից վերադառնալուց հետո: Անցել է ավելի քան հինգ տարի, և այսօր իմ կյանքը կարող է օրինակ լինել: Հետքաղցկեղային այս տարիները նման էին ոտքի կանգնելու, կյանքը վերակառուցելու և կրկին երջանիկ լինելու հաջողված փորձի: Մինչդեռ իմ կյանքը նման էր փշրված, ցաքուցրիվ եղած խճանկարի, որը հավաքելու, գլուխ բերելու համար նույնիսկ ուղեցույց չկար: Ես համառորեն ու խնամքով մասմաս հավաքեցի, ի մի բերեցի, վերակառուցեցի այն պատկերը, որն այսօր կա:

Ինչպե՞ս արեցի, որտեղի՞ց գտա ուժ ու խթան՝ կրկին լիարժեք ապրելու, կյանքը վերադասավորելու: Ինչ խոսք, ես կարող էի ասել, որ որդուս, ծնողներիս նկատմամբ սերն ու պատասխանատվության մեծ զգացումն էր, բայց միայն դա չէր:

Դա նաև ամենօրյա թուլություններիդ, տկարություններիդ ու անկարողություններիդ դեմ մղած պայքարն է, այն մարտահրավերը, որ նետում ես կյանքին, թույլ ու տկար, անհաջողակ լինելու, զոհի կարգավիճակին հարմարվելու անհամաձայնությունը: Սա շատ ավելի հոգեբանական պայքար է, ոչ միայն ֆիզիկական կռիվ: Բայց և այնպես, սա միայն հոգետիպի խնդիր չէ, թե դու թույլ ես կամ ուժեղ, պայքարող կամ հանձնվող: Նույնիսկ ինձ նման կամային հատկություններ ունեցող, պայքարող և չհանձնվող տեսակին քիմիաթերապիաներն ու հոգեբանական անկումներն այն օրն էին գցել, որ իսպառ թուլացած ու հանձնվելու պատրաստ վիճակում էի: Նման դեպքերում բոլորովին այլ մարդ ես դառնում: Ինքդ քեզ դժվարությամբ ես ճանաչում: Հաճախ մտածում ես, որ ուժերդ սպառվել են, որ այդքանից հետո ոչինչ չես կարողանա փոխել կյանքումդ: Թույլ ու տկար այդ վիճակում ընտրության ու հստակ որոշման խնդիր կա՝ պայքարի նետվել, թե՞ մատնել կյանքդ ինքնահոսի և տեսնել, թե ինչ դուրս կգա: Իրականում ոչինչ էլ դուրս չի գա, եթե գործի ու պայքարի չանցնես:

Կյանքը հողի պես է, եթե հողի մեջ սերմի հատիկ չգցես, ծիլ չտնկես, չմշակես, չջրես, մոլախոտերից չազատես, քամուց ու կիզիչ արևից չպաշտպանես, ոտնձգություններից չապահովագրես, այնտեղ ոչինչ չի ծաղկի, չի աճի, պտուղ ու արդյունք չի տա: Միայն հող, ասել է թե կյանք ունենալը դեռևս բավարար չէ. շատերն ունեն կյանք, բայց արդյոք ապրում են, արդյոք ապրում են պտղաբեր և արժանավայել կյանքով:

Տերն ամենքիս մեր բաժին հողն է տվել: Մենք ենք դրատերն ու մշակը: Ինչ այնտեղ ցանենք, դա էլ քաղելու ենք: Մենք

ենք միակ պատասխանատուն: Եթե ծիրանենի ես տնկել, բայց ակնկալում ես անանաս ու հետո բախտդ ես անիծում, որ ցանկալին չստացար, ապա որևէ մեկը մեղավոր չէ, բացի քեզանից: Հողդ բարելավողն ու բերրիացնողը դու ես. ոչ մեկը, իր հողը թողած, չի գալու՝ քոնը մշակի, քոնի վրա ներդրում կատարի, այնպես որ, դադարիր մեղավորներ փնտրել, մեղքը այլոց վրա բարդելու հազար ու մի պատճառ որոնել այն դեպքում, երբ միակ մեղավորը դու ես: Երբ մոտենաս հայելուն, կտեսնես, թե ով է կյանքիդ հերոսն ու հակահերոսը:

Հեշտ չէ ամեն օր կռիվ տալ ամենատարրական բաների համար, հեշտ չէ ինքդ քեզ համոզել, որ ջանքերդ անպտուղ չեն մնալու, և տառապանքների արժեն դրան: Այո՛, մեր կյանքը ընտրությունների հանրագումար է: Եվ այն ամենը, ինչ ունենք, ինչ ստացել կամ բերել ենք մեր կյանք, մեծապես մեր կատարած ընտրությունների արդյունքն են:

Մեր որոշումների վրա հաճախ ազդեցություն են ունենում նաև մեծ ու փոքր դիպվածները: Պատահարները, իրադարձությունները, որոնք այդ պահին կարող են պատահականություններ թվալ, իրականում յուրօրինակ ուղերձներ են՝ ուղարկված մեզ, որ հուշում են կամ փորձում ինչ-որ բան հասկացնել, մեր որոշումների վրա ազդել: Դրանք մեզ ուղղորդում են, որ մտածենք այդ մասին և վճռենք մեր վերջնական անելիքը: Այլ հարց է, թե այդ դիպվածներն ինչպես կընկալենք, դրանց հետևանքները մեզ համար կործանարար կլինեն, թե՛ կառուցողական: Մեկը կարող է վերջնականապես կոտրվել և զենքերը վայր դնել, մյուսը՝ գոտեպնդվել ու ըմբոստանալ: Ուղերձները հաճախ շատ պարզ ու հասկանալի են, բայց ամեն ոք յուրովի է դրանք ընկալում և կիրառում:

ամբողջական գիրքն այստեղ է՝

Bookmark 